«Հաստատում եմ»

ԵՊՀ պրոռեկտոր,

Բ. Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Վահե Սարգիսի Սարգսյանի «Վանի թագավորության պատմության հիմնահարցերը Կառլ Ֆրիդրիֆ Լեման-Հաուպտի աշխատություններում (Ք. ա. XIII – VI դդ.)» Է.00.05 - «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2026 թ. փետրվարի 9 – ի նիստում (արձանագրություն թիվ 8) նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Ա. Ն. Հայրունին, Ա. Ա. Ներսիսյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Տ. Հ. Ղանալանյանը, Վ. Ա. Հակոբյանը, Տ. Կ. Գևորգյանը և ուրիշներ:

Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը եվրոպական հայագիտության ականավոր ներկայացուցիչներից մեկն է, որն արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել Հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ: Հատկապես մեծ կարևորություն են ներկայացնում ուրարտագիտության բնագավառի տարաբնույթ աշխատությունները՝ սեպագիր արձանագրությունների հրապարակում, հնավայրերի նկարագրություն, կրոնի, մշակույթի, շինարարական արվեստի, տնտեսության, քաղաքական կյանքի հետազոտություններ: Շատ հարցերում Լեման-Հաուպտի տեսակետներն ուղենշային են եղել ավելի ուշ շրջանի պատմաբանների համար, ուստի նրա պատմագրական ժառանգության ուսումնասիրությունն ու արժևորումը կարևոր և արդիական խնդիր է նաև մեր օրերում: Վահե Սարգսյանի ատենախոսությունը Լեման-Հաուպտի ուրարտագիտական աշխատանքների համակարգված և ամբողջական ուսումնասիրությունն է:

Сканировано с CamScanner

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլխից, Եզրակացություններից, Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հապավումների ցուցակից՝ ընդամենը 176 էջ:

Ներածությունում ներկայացված է թեմայի արդիականությունը: Այստեղ ատենախոսը թվարկում և գնահատում է Լեման-Հաուպտի կարևորագույն աշխատությունները՝ ընդգծելով, որ այդ աշխատություններն ունեն նաև որոշակի աղբյուրագիտական արժեք: Նշվում է, որ ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Ք. ա. XIII – VI դդ. Ժամանակահատվածը, ինչի համար հիմք է հանդիսացել **Ուրուատրի** և **Ուրարտու** անվանումների հիշատակությունը սկզբնաղբյուրներում:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել ներկայացնել Վանի թագավորության պատմության փուլերը (ներառյալ թեմայի համար կարևոր նշանակություն ունեցող նախորդ և հաջորդ ժամանակաշրջանները)՝ ըստ Լեման Հաուպտի աշխատությունների:

Առաջին գլուխը կրում է «Ասորեստանի արշավանքները Հայկական լեռնաշխարհ Ք. ա. XIII – IX դդ.: Կենտրոնացված պետականության ձևավորումը» վերնագիրը և բաղկացած է երեք ենթագլխից, որոնցից առաջինը՝ **«Ուրուատրի-Ուրարտու երկիրն՝ ըստ Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ուսումնասիրությունների»** վերնագրով, նվիրված է ոչ միայն Ուրուատրիի հիշատակությանը և նրա՝ Ուրարտուի հետ նույնության հարցի քննարկմանը, այլև նույն ժամանակաշրջանում (Ք. ա. XIII – IX դդ.) ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող այլ երկրների մասին տեղեկություններին:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Հայկական լեռնաշխարհի ասսուրերեն արձանագրություններն արշավանքների համապատկերում»**: Այստեղ ներկայացված են Հայաստանի տարածքում Ասորեստանի արքաների թողած արձանագրությունների մասին Լեման-Հաուպտի հետազոտությունները և դրանց արձագանքը պատմագրության մեջ:

Сканировано с CamScanner

Առաջին գլխի երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Վանի թագավորության կազմավորումը»** և նվիրված է Արամու և Սարդուրի I արքաների մասին Լեման-Հաուպտի տեսակետների քննությանը:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է **«Բիայնիլի-Ուրարտուի վերելքը»** խորագիրը: Այստեղ երեք ենթագլուխներում հաջորդաբար քննության են առնված Իշպուինիի, Մենուայի և Արգիշտի I-ի ու Սարդուրի II-ի ժամանակաշրջանին վերաբերող խնդիրները:

Երրորդ գլուխը վերնագրված է **«Վանի թագավորության թուլացումը և անկումը: Հայաստանը Ք. ա. VI դարում»**: Այս գլուխն ունի երկու ենթագլուխ, որոնցից առաջինը վերնագրված է **«Ուրարտուի և Ասորեստանի պայքարը Ռուսա Սարդուրորդու օրոք»**: Այստեղ քննարկվում են Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի Ք. ա. 714 թ. արշավանքի մասին տեղեկություններն ու դրանց մեկնաբանությունները պատմաբանների կողմից: Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը, որի վերնագիրն է **«Ռուսա Արգիշտորդու և Ռուսա Թրիմենայորդու գահակալությունը Վանի թագավորությունում: Հայաստանը հետուրարտական շրջանում»**, ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այստեղ արտացոլված են ոչ միայն Վանի թագավորության պատմության վերջին փուլին, այլև Երվանդական Հայաստանի պատմության հիմնահարցերը: Սա կարևոր է հատկապես այն տեսակետից, որ Լեման-Հաուպտն իր ժամանակի այլ հետազոտողների նման հայերին համարում էր Վանի թագավորության փլատակների վրա պետություն կառուցած ժողովուրդ, ուստի այդ տեսակետներին ծանոթանալը և դրանք վերլուծելը միշտ էլ արդիական է:

Աշխատանքի արդյունքներն ամփոփված են **«Եզրակացություններ»** բաժնում:

Վ. Սարգսյանի թեկնածուական ատենախոսությունը կարևոր և արդիական ուսումնասիրություն է, որտեղ առաջին անգամ ամբողջական և համակարգված հետազոտության առարկա է դարձել Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի ուրատագիտական ժառանգությունը: Հեղինակը կատարել է մանրակրկիտ ու բարեխիղճ

Сканировано с CamScanner

աշխատանք Լեման-Հաուպտի տեսակետները ներկայացնելու և վերլուծելու ուղղությամբ: Աշխատանքում առկա են նաև որոշ թերություններ:

1. Ատենախոսության մեջ շատ քիչ տեղ է հատկացված Լեման-Հաուպտի կենսամատենագիտությանը: Կենսագրությունը ներկայացված է մեկ ծանոթագրության մեջ, իսկ աշխատանքների մի մասին համառոտ անդրադարձ է կատարվել ներածության մեջ (զարմանալիորեն այդ աշխատանքները թվարկված ու նկարագրված են **«Թեմայի արդիականությունը»** բաժնում): Մեկ անձի նվիրված պատմագրական հետազոտություններում ակնկալվում է մեկ ենթագլուխ նվիրել տվյալ անձի կենսագրությանը, իսկ աշխատություններն էլ ներկայացնել ամենայն մանրամասնությամբ՝ գրվելու ժամանակն ու հանգամանքները, կիրառությունը, պատմագրության վրա ունեցած ազդեցությունը և այլն:
2. Ատենախոսությունը շարադրված է ժամանակագրական սկզբունքով, ինչը տրամաբանական է, սակայն կառուցվածքում առանձնացված չեն Վանի թագավորության պատմության առանձին հարցերին (կրոն, լեզու, մշակույթ, պետական կարգ, ժողովրդագրական պատկեր և այլն) նվիրված բաժիններ: Այդ խնդիրների մասին Լեման-Հաուպտի տեսակետները և դրանց վերլուծությունը ցրված են ատենախոսության տարբեր գլուխներում: Նույնիսկ այն դեպքերում, երբ գլուխը կամ ենթագլուխը նվիրված է հայեցակարգային հարցերի, օրինակ՝ Վանի թագավորության կազմավորումը կամ անկումը, Ուրարտու-Հայաստան անցմանը, քննարկված են ոչ այնքան Լեման-Հաուպտի հայեցակարգերը, որքան մասնավոր խնդիրների (Սարդուրիի տիտղոսաշարը, Սալմանասար III-ի արշավանքի երթուղին, հնագետների գտած կարասները, Կյուրոս Մեծի պատերազմները, Աքեմենյանների տերության և Վանի թագավորության վիմագրական ավանդույթների միջև առկա զուգահեռները) մասին նրա արտահայտած կարծիքները:

Сканировано с CamScanner

3. Ատենախոսության շարադրանքն ավելի դյուրըմբռնելի կլիներ, եթե գլուխների և ենթագլուխների վերջում հեղինակը ամփոփեր տվյալ հատվածում արված եզրակացությունները: Այդ ամփոփումները բացակայում են բոլոր ենթագլուխներում:

Նշված թերություններով հանդերձ՝ Վ. Սարգսյանի ատենախոսությունը նշանակալի աշխատանք է Լեման-Հաուպտի ուրարտագիտական աշխատությունները հետազոտելու և գիտական հանրությանը ներկայացնելու գործում:

Որոշեցին – ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից գտնում է.

ա) Վահե Սարգիսի Սարգսյանի «Վանի թագավորության պատմության հիմնահարցերը Կառլ Ֆրիդրիֆ Լեման-Հաուպտի աշխատություններում (Ք. ա. XIII – VI դդ.)» թեկնածուական ատենախոսությունը հաջողված, որոշակի պատմագիտական արժեք ներկայացնող աշխատություն է, որը լույս է սփռում Վանի թագավորության պատմագրության որոշ առանցքային խնդիրների վրա,

բ) Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Է.00.05 - **«Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ** պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄ. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, Պ.Գ.Դ., ՊՐՈՖ.՝ Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

11.02.2026

Сканировано с CamScanner